




ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ
ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեգարծի առթիվ, Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից, Ճեմարանի հանդիսությանց մեծ գահի՝ ճում, հոկտեմբերի 7-ի երեկոյան ժամը 7.30-ին կազմակերպվել էր հարգանքի երեկո:

Այդ երջանիկ առիթով, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը իրենց որդիական հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքն էին միացնում համազգային ուրախության այդ տոնակատարության կապակցությամբ արտահայտված զգացմունքներին և բարեմաղթություններին:

Ժամը 7.30-ին Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով առաջնորդվեց Ճեմարան: Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Ս. Նղիշե, Ս. Սիրոն, Ս. Սահակ արքեպիսկոպոսները, Ս. Վարդան, Ս. Եղիշի սրբադանները, Ս. Շահն, Ս. Կոմիտաս, Ս. Պարզե, Ս. Վահան, Ս. Նղիշե, Ս. Հայրիկ, Ս. Մուշեղ, Ս. Տիրայր, Ս. Մեսրոպ, Ս. Խորեն, Ս. Նահապետ վարդապետները, Մայր Աթոռի միաբանությունը, Վարպետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ:

Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունվեց զորդագին ծափահարություններով: Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց հանդիսությանց սրահ, ուր դրավեց նախագահի Աթոռը: Նախագահության սեղանի շուրջը տեղ դրավեցին Ս. Նղիշե, Ս. Սիրոն արքեպիսկոպոսները, Վարպետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամները և բարձրադատիվ Ս. Շահն վարդապետ Ամենայնը:

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեգարծին նվիրված հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՌ Պետական հիմնով, որը կատարեց Ճեմարանի նվազախումբը: Ապա սրահում թնդաց Մայր Աթոռի հիմնը՝ ժեշ Միածինն ի Հօրէն, երգված Ճեմարանի ուսանողներից կազմված երգչախմբի կողմից:

Հանդեսում բացման խոսքն ասաց Ճեմարանի դասախոս պ. Արթուր Հատիտյանը: Նա հանգամանորեն խոսեց մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետի ընտրության, օծման և գահակալության պատմական նշանակության մասին ընդհանրապես և ի մասնավորի ծանրացավ Վեհափառ Հայրապետի մեկ տարվա հոգևոր, փանական, մշակութային, շինարարական, կազմակերպ-

շական, տնտեսական, վերանորոգչական գործունեության, արտասահման կատարած ուղևորության, կահիրեի նպիսկոսական ժողովի պատմական նշանակության և ապա Վեհափառ Հայրապետի հետագա տարիների խանդավառ և հուսադրիչ հեռանկարների և ծրագրերի վրա:

Ընծարանի երգչախումբը հաջողությամբ երգեց «ՄՎ մեծաքանն»-ը: Ուսանող Ի. Մելքոնյանը արտասանեց Վ. Թեքեյանի «Նկեղեցին Հայկական» քերթվածը: Ապա հոգեշնորհ Տ. Մանուկ վարդապետ Անթարյանը, հանուն ընծարանի տեսչության, կարգաց հետևյալ բովանդակալից ուղերձը:

«Վեհափառ Հայրապետ, գերաշնորհ սըրբազան հայրեր, թանկագին հյուրեր, հոգեշնորհ հայրեր և սիրելի ուսանողներ».

Պարզ դատողություն է, որ ժամանակը իմաստավորում է միայն մարդու կողմից ու մարդու համար, և այդ իսկ է պատճառը, որ երբեմն ժամանակի մեկ որևէ միավոր շատ ավելի արժեքներ ու հիշատակներ է թողնում, քան նույնօրինակ բազմաթիվ միավորներ: Ձերդ Ս. Օծուկյան դահակալության տարեկարծի օրը ևս շատ ավելի արժեքներ ու հիշատակներ բերած ժամանակի մեկ փոքր միավոր է, որը սակայն առնվազն հարգանք և սեր է թելադրում: Տարի է անցել և այդ տարվա բոլոր օրերը եղել են երկուսների պահեր, որոնք տվել են իրենց լիարժեք ծնունդը, կրոնական, եկեղեցաշեն և ազգային կյանքի տարրեր մարզերում: Այդ բոլորի մասին զգվար է եղրակացություն ու դահատական տալ աշուրվա աշարան սեղմ կարեկիտության մեջ, թեկուզ նրանք գեռես կամ սկիզբ են, կամ էլ հազիվ ընթացքի մեջ մտած: Ես միայն կասեմ, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ընծարանի և նրա ուսանողության հանդեպ Ձերդ Սրբության հետեղական հոգածությունն ու սերը կենդանի վիճակներ են Ձեր այն մեծ հիգին, որով իզմն ունեք բուժելու բազմիցս մարտիրոսացած Հայաստանյայց եկեղեցու բոլոր վերքերը, նրա շինության և պայծառության համար: Քիչ անգամներ չի նահատակվել այդ եկեղեցին իր դոլության երկարատև դարերի ընթացքում, և նրա բուժման կարեկիտություններից մեկն է եղած այն կենդանի օժանդակությունը, որը բերվել է մեր կրոնական դպրոցների «մթում կորած» խուցերից: Մեր եկեղեցու վերակենդանացման գործում իրենց որոշիչ մասնակցությունը բերելով հանգեք, նրանք իրենց կամարների տակ ստեղծեցին շատ ու շատ արժեքներ մեր ժողովրդի մշակույթն ու հոգին կազմակերպելու, հարստացնելու և բացատրելու տեսակետից: Եղել են նրանք ոչ միայն միտք ու մշակույթ թրծող ջերմա-

դին հետցներ, այլև մանավանդ հոգի մշակող այն դարբնոցները, որոնք հայրենանվեր և եկեղեցաշեն դարբինների հանձարի և բազուկների քրտնաջան աշխատանքի շնորհիվ մինչև այսօր մեր ճակատի վրա շխմբող լույսն են սփռել: Անցյալը այդօրինակ զբաղողների՝ կարող է մեզ պարտագրել միմիայն ընհանրող երախտագիտություն ու պաշտամունք, Ահավոր կերպով տառապած մեր ժողովրդի դպրությունը, զգալու իր սեփական ձեռք, նկարագրի անաղարտ պահելու հերոսական հիգր խթանելու համար նրանք միշտ էլ վճռականությունն ու կարողությունն ունեցել են:

Մեր բոլոր իմաստուն հայրապետների, մեր բոլոր բազմերախտ հոգևոր հայրերի միտքն ու խիղճը մշտապես առնված են եղել այն վսեմ տեսիլների հետ, որոնք կյանքի էին կոչվում նմանօրինակ դպրոցների մեջ մեր ստեղծագործ ժողովրդի կյանքը, հոգին, մշակույթը ծանրակշիռ արժեքներով բեղմնավորելու համար:

Դուք, Վեհափառ Տե՛ր, խոհեմ ու երջանիկ ժառանգորդն եք այն բոլոր լավագույն ավանդների, խոհների ու հույզների, որոնք Լուսավորչի կանթեղից կաթիլ առ կաթիլ թափվող լույսի և արցունքի ձևի տակ պայծառացրել են Ձեր միտքը, մեծացրել են Ձեր հոգին և լայնացրել են Ձեր սիրտը: Այսօր, մեկ տարվա շափազանց կարճ ժամանակի ընթացքում շատ արժեքավոր հիշատակներ արձանագրելով Ձեր կյանքի և Հայաստանյայց եկեղեցու պատմության էջերին, հպարտությունն ունենք ասելու, որ Ձերդ Սրբության շխմարար ծրագրերի շարքին իր տիրական անդն ունի Ս. Էջմիածնի Հոգևոր Ընծարանը:

Մինչ այսօր Ս. Էջմիածնի Հոգևոր Ընծարանի կատարածը շնորհակալ գործ է: Նա արդեն ունեցել է իր «բերքի տունը» և իր համեստ հունձը շատ ու շատ հոգիների սնունդ է տվել և մանավանդ պատրաստ է տալու առավել խոհեմությամբ ու նվիրվածությամբ: Երջանկահիշատակ Գեորգ Զ Հայրապետի նրախորին է այդ, և վստահ ենք, որ նրա հոգին մեզ հետ է այժմ այս հարկի տակ, մեր ուրախությանց և մեր լավատես արամադրություններին բաժնեկից:

Սակայն նկատի ունենալով հաջողություններից չշտնալու Ձեր մշտական թելադրությունը Ձեր շրջապատին, գիտենք հաստատ, որ Ձեր պահանջը Հոգևոր Ընծարանից շատ ավելին է: Գիտենք միաժամանակ, որ պատահարար չէ, որ իր նախորդների պարտականությունն ու դերի մեջ եք ցանկանում տեսնել նրան. չէ՞ որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ընծարանը իր առաքելությունը չի ավարտած,

չէ՞ որ նա այսօր էլ կարող է իր բաժինը բերել հայ մշակույթը հոխացնելու գործին, չէ՞ որ մանավանդ այսօր եւ ողորդարեն ցանկամտում են մորթիկ Հայաստանայաց եկեղեցին իր իսկ կարծեցյալ «իշխան»-ներից մեկը... Այսօր ահապոր փառնոր զավագրութեամբ սողոսկիկ է նրա խնկավետ կամարների տակ և անգույն հանդգնութեամբ տրամադիր է կործանել նրա շողակաթ զըմբերը:

Դուք, Վեհափառ Հայրապետ, իմաստունորեն կանխատեսելով խորությունը ապագա հնարավոր ողորդութեան, առանց երբեք կորցնելու Ձեր շինարար լավատեսությունը, փափաղն ու որոշումն ունեւր աստվածակաւույց Մայր Աթոռի շուրջ ստեղծելու որքան դիտակից, նույնչափ և Հայաստանայաց նվիրական եկեղեցու բոլոր ավանդներին ու սրբութեանց նախանձախնդիր հոգեւորականների մի սերունդ: Գիտեմք, որ այդ Դուք պահանջում եք սուսկերպեւ Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանից:

Սիրելի Վեհափառ Հայր, Ձեր զահակաւութեան տարեդարձի այս հանդիսավոր և սրտատուշ պահին, թույլ տվեք հավաստեցնել Ձեզ, որ մեր Հոգեւոր ճեմարանը Ձերդ Սրբութեան հայրական հոգածութեան շնորհիւ արդեն իսկ էլ փճակի է խոստանալ Ձեզ, որ ինքը մոտիկ ապագայում կտա Ձեզ այդ սերնդից արժանավոր ներկայացուցիչներ: Այսօր, Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանը կարող է հայտարարել բոլորին, որ ինքը շուտով Հայաստանայաց եկեղեցուն կընծայեցրի, այնպիսի հոգեւոր սպասարկուներ, որոնք ամեն օր և ամեն ժամ պատրաստ կլինեն իրենք պատարագելու Լուսավորչի, Սեսրոպի և Տաթևացու Ս. Խորանի վրա, եթե ապագան այդպէս պահանջի: Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանը խոստանում է և ուխտում, որ երբեք Ձեզ հուսախաբ չի տնելու, Լուսավորչի «միշտ պալլալիք» կանխի շողքը այնտեղ անպակաս է լինելու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նրա նախանձախնդիր Հայրապետութեանը անձնվեր ծառան է լինելու:

Թույլ տվեք երկնի ամենապարզ և Աստծուն խնդրել, որ Ձեզ բեղմնավոր և երջանիկ երկար տարիներ պարգևի: Թո՛ղ Նրա արևը միշտ ոսկեզօծի Ձեր օծյալ զազաթը:

Թե՛ղ շին, պայծառ և անսասան մնան մեր սուրբ ու սիրելի և նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայոց Հայրապետությունը, նրանց հանդեպ փորձված բոլոր ստնձղութունները թո՛ղ Աստված խափանի:

Երջանիկ կյանք և պտղավետ գործունեություն Ձեզ, Վեհափառ Հայրապետ:

Ապա Հ. Քեմուրջանը երգեց ժողովուրդի կանխեցրա (խոսք՝ Հովհ. Քումանյանի, երաժշտություն՝ Հ. Գեորգյանի), Հետո ճեմարանի և լսարանի ուսանող բաղնիքում Հովհաննես սարկավագ Գալինյանը, հանուն իր սարկավագ եղբայրների, կարգաց հետևյալ ուղերձը:

Վեհափառ Հայր.

Հոգեւոր ճեմարանի սարկավագների և բարձր դասարանի ուսանողների անունից, բաղք ու սրտագին պարտականություն ունեմ Ս. Լուսավորչի Աթոռի վրա Ձերդ Վեհափառութեան զահակաւութեան առաջին ու երջանիկ տարեդարձի առթիւ, որդիական ակնածանքով ներկայացնելու ճեմարանի ավագ ուսանողների սերն ու նվիրումը, երախտագիտությունն ու սրտագին շնորհավորանքը:

Մեկ տարի է անցել ա՛յն օրվանից, երբ Ձերդ Վեհափառութեան արժանավոր ընտրութեամբ վերացվեց սգի սև բողբ լուսաշափիղ և բազմերախտ Ս. Գրիգոր Լուսավորչի Գահից:

Հայ եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը ցնծութեան մեջ էին, որովհետև հայ հավատի օրրան և Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը ունեցավ իր արժանավոր Գահակալը:

Ս. Էջմիածինը անցյալում բազմաշարժար հայ ժողովրդի զարավոր կյանքի այնպիսի և խռովահույզ ծովում եղել է անխորտակելի լուսա փարոս: Եվ հայր, որ իր ֆիզիկական զույլությունը պահպանել է և հասել մեր այս երջանիկ օրերին, իր գոյատևման, իր կյանքի և իր բախտավորութեան համար շատ բանով պարտական է Լուսավորչի այս պատմական Աթոռին և նրա լուսարեակ հայրապետներին:

Այժմ, Վեհափառ Տե՛ր, Աստուծո կամքով և Ազգի ընտրութեամբ, Դուք եք Լուսավորչի կանխիկ արթուն լուսարարապետը, կանխե՛ղ, որը զարեք շարունակ լույս առած Քրիստոսից, լուսավորել է մեր եկեղեցու և ժողովրդի ուղին դեպի փրկություն: Մեր հայրապետների ձեռքով վառված հայ հավատի, հայ դպրութեան, հայ մշակույթի այդ անշեղ հուրը միշտ վառ է եղել Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի հին և նոր ուսանողների սրտում:

Մեր ճեմարանները հանդիսացել են այդ սրբազան լույսի վառարանները, որտեղ ստեղծվել, զարգացել ու աչքի լույսի պէս պահվել պահպանվել են մեր հոգեկան մշակութային անկրկնելի արժեքները:

5-րդ դարից սկսյալ մինչև այսօր, մեր հոգեւոր կրթարանների ուսանողությունը կոչված է եղել վառ պահելու Ս. Լուսավորչի

չի, Ս. Սահակի, Ս. Մեսրոպի, Նարեկացու, Շնորհալու, Հայրիկի, Կոմիտասի, Գևորգ Զ-ի անուններով ավերագործված հայ ժողովրդի դպրության, հույսի և հավատի սրբալույս ջահը:

Մենք՝ երիտասարդ սարկավազներս, տոգորված մեր երանելի հայրապետների եկեղեցասիրությամբ, հայրենասիրությամբ, և վեհափառ Հայրապետիդ կենդանի օրինակով ներշնչված, այժմ այս հանդիսավորության առիթով, ծնրադրի, համբուրում ենք Ձերդ Ս. Օծովյան Ս. Ազը և շնորհավորում Ձեր դահակալության առաջին տարեդարձը: Աղոթքներ ենք առաքում առ Աստված Ձերդ վեհափառության քաջառողջության և արեւշատության համար:

«Երկարեցե՛ք Տեր զաւուրս Ձեր, ի փառս և յերջանկութիւն Ս. Եկեղեցոյ և Ազգիս Հայոց»:

Այս տարվա նոր ընդունված ձեմարանականների զգացմունքների և խոհերի թարգմանք եղավ ժիրալը Ալվազյանը, որն իր գրավոր ուղերթի մեջ ասաց.

«Վեհափառ Հայր».

Թույլ տվեք ինձ Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանի նոր ընդունված սաների անունից շնորհավորել Ձեզ Ձեր դահակալության առաջին տարեդարձի առթիվ:

Այս հանդիսավոր պահին մենք՝ Հոգևոր ձեմարանի ուսանողներս, մեր երախտագիտության խոսքն ենք հայտնում Ձերդ վեհափառությանը այն ջերմ հայրական հոգատարության համար, որով շրջապատված ենք այս սուրբ հարկի տակ:

Շնորհապարտ ենք Ձեզ այն հոգևոր կրթության և բարոյական դաստիարակության համար, որն ստանում ենք այստեղ, Ձեր հայրական անմիջական հսկողությամբ և ցուցմունքով, Հոգևոր ձեմարանի ուսուցչական և տեսչական կազմի ջանքերով: Հոգևոր ձեմարանի նպատակն ու ոգին Ձեր շնչով և Ձեր ղեկավարությամբ հոգեպես ոգևորում են մեզ և առաջ մղում:

Անցյալում Ս. Էջմիածինն էր, որ գլխավորում էր հայ ժողովրդի հոգևոր և մշակութային դործունեությունը: Հայ հոգևորականները մի ձևերում սուրբ խաչը, մյուսում սուրբ բնած մեր սուրբ հավատի և Հայրենիքի պաշտպանության դիրքերում են փղած միշտ:

Այսօր մենք հպարտությամբ և երախտագիտությամբ հիշում ենք Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Ղևոնդ երեցին, Խաչեգրի Սղիշին և մյուս բազմաթիվ հայրենասեր և հավատավոր եկեղեցականների անունները, որոնք իրենց լուսավոր կերպարներով դարձրել են մեր ժողովրդի պատմությունը, հոգին, մշակույթը:

Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանը եղել է այն հոգևոր ու լուսավորական կենտրոնը, որտեղ դաստիարակվել են մեր մեծածոծովաբաններն ու մատենագիրները, որոնք իրենց կյանքն ու տաղանդը, կարողություններն ու շնորհները ի սպաս են դրել հայ ժողովրդի հոգևոր և իմացական մշակույթի զարգացմանը:

Այսօր դարձյալ Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանը, հավատարիմ մնալով իր դարավոր ավանդությանը, Ձեր ջանքերի շնորհիվ և Ձեր դահակալության տարիներին կղանա հայ հոգևոր մշակույթի կենտրոններից մեկը: Գիտակցելով մեր վրա դրված պարտականությունները, այս հանդիսավոր պահին խանդավառությամբ խոսք ենք տալիս Ձեզ, Վեհափառ Հայր, սուրբել և իրագործել Ձեր հույսերը՝ հետագայում դառնալու լավ հոգևորականներ և մեր ժողովրդի հոգևոր սպասավորներ: Ս. Էջմիածնի՝ Լուսավորչի մեծ Տան ուխտին հավատարիմ մնալով, մենք անշահախնդիր կերպով կուխտենք հայ ժողովրդին, Եկեղեցուն և մեր բազմադարյան մշակույթին ծառայել:

Արտահայտելով մեր սրտարուս երախտագիտական խոսքը, մաղթում ենք Ձերդ Ս. Օծովյանը արեւշատություն, անսպառ ուժ և կորով, որպեսզի բարգավաճի հայ ժողովրդի հոգևոր կյանքը, ծաղկի նրա հոգևոր դործունեությունը:

Թող ամենակարող Տերը բազմապատկի Ձեր կյանքի տարիները ի փառս մեր Ս. Եկեղեցու պալծառափայլության և հուրախության մեր հավատացյալ ժողովրդին:

Ձեմարանականներ Հակոբ Ընենկյանը և Արթուր Մարգարյանը խորունկ ապրումով արտասանեցին առաջինը՝ Հովնաթան Լավհանխյանի «Էջմիածին» բանաստեղծությունը, իսկ երկրորդը՝ Սալվա շինար Էջմիածին գեղեցիկ տաղը:

Ապա խոսք արվեց գերաշնորհ Տ. Նիկիշ արքեպիսկոպոս Տերաբյանին, որ ասաց.

«Նորին Ս. Օծովյան բարեհաճությամբ և հրավերով կուղեմ քանի մը խոսք րնել ուսանողությանը:

Ձեզի համար հաճելի է անշուշտ, որ Վեհափառ Հայրապետեն, ուսուցիչներեն հետո խոսին մարդեր, որոնք կապրին հեռու հեռու մեր երկրի սահմաններեն, բայց հոգիով մտա են Ձեզ և կծառայեն Եկեղեցիին:

Դուք, շնորհիվ Նորին Ս. Օծովյան խմատուն առաջնորդության և ձեր ուսուցիչներու շունչին, Ս. Էջմիածնի այս Վեհավայրին մեջ ձեզի հետ ունիք մեր դարերը և բանականը այն հոգիներում, որոնք Էջմիածնի սրտերեն անդին անտեսանելիորեն կհսկեն հարստացնելով ձեր հոգին: Ով որ Էջմիածնին

կնախի, կնախի մեր պատմության, մեր անցյալին և մեր նկեղեցիկ դարավոր խորհրդին, զի էջմիածին քարեղեն շենք չէ միայն, այլ ողեղեն իրականություն և տապան փրկության մեր ժողովրդին»:

Այս հանդիսավոր առիթով խոսք առավ նաև բարձրաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը.

«Միրելի ուսանողներ, այսօր մեր խորհուրդները կեդրոնացույցինք Վեհափառ Հայրապետի անձինն ու գործին շուրջ: Վստահեմ, որ ուսանողներու սրտարուխ և ամեկոծ ճառերը շատ ավելի հրճվանք պատճառեցին Վեհին, քան թե ճախարակչալ ճառերը:

Ամեն մի զաղափար պետք ունի դպրոցի, օջախի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր դերը կատարելու համար պետք ունի իր դպրոցին, իսկ Հայ նկեղեցին՝ նոր առաքյալներու, խնկելով վեղարավորները, մեր սիրտը կհրդեհվի Հիսուս տանկեղի առաքյալներով սկսավ իր առաքելությունը: Դուք բախտավոր պետք է զգաք, որովհետև Վեհափառն է Ձեր ուսուցիչը: Քիչ հայրապետներ ըրեր են այդ իր հոգին կհրճվի ձեզ բսելով. «Ահա նա և մանկունք իմ»: Այսպես ըսելու իրավունք ունի Ան:

Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի գործը իր պտուղը տված է: Ներկա Հայրապետը կշարունակե Անոր գործը:

Արտասահմանի համար պետք ունինք հոգևորականներու: Մենք ևս կհրճվինք, տեսնելով ձեզ շուտով վեղարներու տակ, ստանձնելու համար սուրբ գործը: Մենք պետք ունինք նոր առաքյալներու: Մեր եկեղեցյով չորս կրթական ժառանգավորաց վարժարանները անբավարար են, ժողովուրդը ծարավի է Ավետարանին, հայրենասիրության: Հայրապետը ուրախ է գնելով ձեր վրա իր հույսը: Արտասահմանի հայությունը հույս ունի, որ էջմիածինը ձեզմով նոր հույս և հավատք կնկերշնչե: Դուք պետք չէ հուսահատիք, որովհետև Աստված ձեզի հետ է: Դուք ևս մեր ժառանգավորները և ավանդապահները Հայ եկեղեցիին և Լուսավորչի կանթեղին, որն ստանց պարանի «կախ է քնկած երկրից» և կլուսավորե Հայոց Աշխարհը:

Դուք երջանիկ սերունդ եք, ոչ միայն առնոր համար, որ Հայրենիքը կծաղկի ձեր շուրջը, այլ նաև՝ որովհետև նորին Ս. Օծուխյան դեկավարությամբ կծաղկի Հայ եկեղեցին Հայրենի երկրին մեջ: Հետեցեք Անոր, որպեսզի ըլլաք Հայ եկեղեցւոյ առաքյալներ:

Նորին Ս. Օծուխյան Վեհափառ Հայրապետի փափագով խոսք առավ նաև Անթիշիաքի միաբան բարձրապատիվ Տ. Ծառն վարդապետ Աճեմյանը.

«Միրելի՛ սաներ, Վեհափառ Հայրապետի փափագն է իմ համեստ խոսքը ըսել ձեզ, ապալ համար իմ այլ զգացումը: Նա այ ունեցա զգացում, որ ձեզի հանդեպ քիչ մը խնդակցություն է: Դուք բաղձաթիվ պատճառներ ունիք ուրախանալու: Առհասարակ հոգևորականի ուրախությունը տրիշ է, մենք մեր ուրախությունը կփնտրենք մեր առաքելության հաջողություններում: Ձեր առաջ կա ապագա լույսն դաշտ մը: Դուք պիտի երթաք ավետարանելու նոր բացվող եկեղեցիներու մեջ: Դուք Ավետարանի լույսը պիտի տանիք թույլ հոգիներին ներս, դուք պիտի տանիք հավատքը, որ կպակսի ներկա սերունդին մեջ: Անշուշտ, ձեր մեծագույն ուրախությունը պիտի նկատեք այն, որ դուք ձեր դործունեությամբ օգտակար բան մը բրած եք և այդ պիտի ըլլա վարձատրությունը ձեր առաքելության:

Կմաղթեմ ձեր առաքելության մեջ հաջողություն: Դուք հանձինն նորին Ս. Օծուխյան ունիք առաքյալ մը որպես ուղեցույց: Դուք ևս պատրաստվեցիք հոգեպես, անխաբղախ զգացումով աշխատելու ձեր հոտին մեջ: Ծնոր՞ք կայսկոպոսը, որ շուտով գալու է, իմ այ տեսույն է եղած: Ան շանագած է իմ մեջ սերմանել բարին, սեր դեպի Հայրենիքը և եկեղեցին: Հանձին անոր, դուք պիտի գրտնեք հայր մը ձեր հոգիին ծաղկումին համար: Պիտի մաղթեմ, որ կարենաք ժառանգել իր քաղցր հոգին, որ, հոգևորականի իրական և անխաբղախ նկատառում. նմիոված է Հայաստանյայց եկեղեցիին: Պիտի տեսնեք, թե ան այ հոգևորական մըն է, որ իր ուրախությունը փնտրած է լավ առաքյալ մը ըլլալու հոգեկան գոհացումին մեջ»:

Պաշտոնական այս սրտագին խոսքերից հետո, երդախոսմամբ հանդիսությամբ և հաջողությամբ երգեց «Ամեն հալի սրտից բխած» հայրապետական մաղթերգը, որն ունկնդրվեց հոտնկայս, խորունկ ակնածանքով և պատկառանքով:

Ապա ընդհանուր խանդավառությամբ մը Նոյություն և ծափերի տեղատարափի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Երբ մեր Բայերը կուղղվին դեպի Հոգեվար ձենարան, պետք է խոստովանինք, թե հոգեմած վիճակի մեջ էինք, այսօրվան հանդիսավոր արարողություններեն և ընդունելություններեն հետո: Սակայն ձեր մեջ գալով Մեր հոգևորություն փառանեցավ: Ողևորություն մը իսով մեր սրտերում մեջ, երբ լսեցինք ձեր երգը, ձեր արտասանությունները և ձեր խոսքը, ծագրով մը, որ հաշող էր կազմված: Մենք Մեր գոհունակությունը կհատենեմ հանդեսը կազմակերպող ուսուցիչներուն և ուսանողներուն:

Սիրելի՛ ուսանողներ. քիչ առաջ լսեցի՛ք ոգեշնչված, իմաստուն խոսքեր մեր սրբազաններուն և վարդապետներուն: Անոնց խոսքերուն մեջ գտանք մարգարիտ մտածումներ. կմաղքենք, որ պահեմք և յուսացնեմք զանոնք: Անոնք խոսեցան ճշմարտության և անձնավորության մասին և մաղքեցին, որ Դուք դառնա՛մ ճշմարտությունները յուրացուցած անձնավորություններ: Մեզ համար շատ բանկազին բան է այս պատգամը: Մեր Հոգևոր Ճեմարանի մեծ նպատակը պիտի ըլլա ձեր նկարագիրները կերտել և ձեզ հասցնել անձնավորության կատարին:

Սիւն սրբազանը «օջախ» բառը հիշեց, որ Մեզ հիշեցուց երանաշնորհ Գարեգին Կարողիկոսը: Ի Տեր հանգուցյալ Հայրապետը, որ այստեղ էր մեծցած և աճած, երբ պաշտոնի բերմամբ կմեկնէր արտասահման 1934 թվականին, այստեղ կար ոչ լավ կացություն մը միաբանության կյանքի համար: Մեկնելու պահուն, այդ կացության իրեւ հետևանք, այստեղ մնացողները կխորհէին վերջ տալ միաբանական հաշարանին և ամեն մեկը իր միջոցներով սնունդը պատրաստէր իր խուցին մէջ: Գարեգին Կարողիկոսը ճամբա ելլելէ առաջ խորհուրդ էր տվեր, արցունքը աչքերուն, որ պահպանվի միաբանական սեղանը և «վանքի օջախը չվարի»: Ավա՛ղ, իր պատվերը հնարավոր չէիլավ կատարել, մարեցավ վանքի օջախը և փակված մնացին Ճեմարանի դռները: Անցան օրեր, եկան նոր ժամանակներ, բացվեցան նոր հորիզոններ: Ս. էջմիածնի լույսերը վառեցան: Միաբանական օջախը վառ է այսօր և ծուխը կբարձրանա ազատ և առավոտեն մինչև երեկո:

Տասը տարիներ առաջ Գևորգ Զ Հայրապետը բացավ Հոգևոր Ճեմարանի դռները: Անցյալ տարի մեր ուսանողներուն քիվը 20 էր, այժմ 50-ի կմոտենա, իսկ մի Իանի տարի հետո պիտի հասնի 100-ի:

Այսօր էջմիածնի մէջ նոր կյանք կծաղկի: Հոգևոր Ճեմարանը կեդրոնական տեղ մը կգրավէ այդ կյանքին մէջ: Մեր բոլոր մտածումները կուղղվին անոր, և մեր նյութական միջոցները պիտի շնանայենք, որ պէսգի Հոգևոր Ճեմարանը իր դասարաններով, հաշարանով, իր հանրակացարանով հետզհետեւ ավելի բարելավվի: Մեր հնարավորությունները շատ են և անսահման, և մենք պիտի հասնինք մեր բոլոր հնարավորություններու օգտագործման, ղեկով Ճեմարանը իր պատմական բարձրության վրա:

Մեր աղոթքն է առ Աստված, Մեր գործունեությունը առաջին տարեդարձին, որ Տե՛ր ու՛մ և կարողություն պարգև և հառաջ բնաբանեմք դեպի նոր նվաճումներ, դեպի նոր բարձունքներ, ի փառս Աստուծո, Ս. էջմիածնի և հայ ժողովրդի: Թող օրհնյալ ըլլա Հոգևոր Ճեմարանը, ուսուցչական կազմը և ուսանողությունը: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի հայրական խոսքերն ու պատգամը խորապես տպավորվեցին բոլոր ներկաների մտքերում և հոգիներում, և մանավանդ Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության հրախտազետ սրտերում:

Նրդշախումբը երգեց, «Հայր մեր»-ը: Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ այս գեղեցիկ գրական երեկոն:

Հոգևոր Ճեմարանի պատմության էջերի վրա այդ օրը մի գեղեցիկ և ամոժականությամբ էջ ևս ավելացավ:

